

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության փորձագետ Արփինե Ամիրջանյանից

Ես՝ Արփինե Ամիրջանյանս, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 56 պայմանագրի համաձայն:

Մինչև 2019 թվականի օգոստոսի 26-ը կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- Մասնակցել եմ Անչափահասների արդարադատության խորհրդի աշխատակարգի մշակման աշխատանքներին,
- Աջակցել եմ Անչափահասների արդարադատության խորհրդի շրջանակներում շահագրգիռ մարմինների հետ համատեղ ծրագրերի մշակման աշխատանքներին, մասնակցել Անչափահասների արդարադատության խորհրդի նիստերին,
- Իրականացրել եմ անչափահասների արդարադատության ոլորտում ՀՀ օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, որի շրջանակներում մասնակցել եմ նաև «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին՝ անչափահասների մասով,
- Մասնակցել եմ Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպվող «Վերջ երեխայի սեռական առցանց շահագործմանը և բռնությանը» միջազգային ծրագրից բխող գործողությունների նախապատրաստական աշխատանքներին. նշված ծրագրի նպատակն էր զարգացնել երեխայի սեռական առցանց շահագործման և բռնության դեմ պայքարի ոլորտում շահառու պետությունների կարողությունները՝ ներպետական մակարդակում առկա խնդիրները վեր հանելու, դրանք քարտեզագրելու, դրանց լուծմանն ուղղված համապատասխան առաջարկներ ներկայացնելու, նշված պայքարի շրջանակում շահագրգիռ մարմինների համագործակցությունը խթանելու, իրավակիրառ մարմինների կարողությունները զարգացնելու, ինչպես նաև իրազեկման բարձրացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու միջոցով,
- Ըստ անհրաժեշտության կատարել եմ վարչության կողմից հանձնարարված գրությունների, ընթացիկ հաշվետվությունների պատասխան նախագծերի, ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների, դիտողությունների ներկայացման աշխատանքներ:

Հակակոռուպցիոն և քրեակատարողական
քաղաքականության մշակման
վարչության փորձագետ՝



Արփինե Ամիրջանյան